«Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ
Հասցե՝ քաղաք Վանաձոր, Տիգրան Մեծի 47/13-1
Հեռ. (+374) (98) 200-166

DIRECT DEMOCRACY
For Consolidation Of Democratic Institutions NGO

"Direct democracy" NGO for consolidation of democratic institutions
Address: Lori Region, Vanadzor, Tigran Mets 47/13-1
Tel. (+374) (98) 200-166

Թիվ 03/75
13.05.2026թ.

Լոռու մարզպետ Ա. Մկրտչյանին

Հարգելի պարոն Մկրտչյան,

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն 2026 թվականի մայիսի 08-ից արձակուրդում գտնվող մարզպետարանի աշխատակազմի և դրա ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների վերաբերյալ, ինչպես նաև 2026 թվականի մայիսի 08-ից մինչև հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ արձակուրդի դիմում ներկայացրած աշխատակիցների վերաբերյալ՝ կից ներկայացված ձևաթղթով:

Եթե նշված ձևաչափով տեղեկությունը հնարավոր չի տրամադրել, ապա խնդրում ենք տրամադրել դրանում նշված ամբողջական տեղեկատվությունը՝ պաշտոնյայի անուն-ազգանունը, պաշտոնը, արձակուրդի մասին դիմում գրանցելու ամսաթիվը, արձակուրդի մեկնարկի և ավարտի ամսաթվերը, արձակուրդի տեսակը՝ վճարվող կամ չվճարվող:

Քանի որ տեղեկատվությունն անհրաժեշտ է ընտրությունների դիտորդական առաքելության համար, խնդրում ենք հարցմանը պատասխանել հնարավորինս սեղմ ժամկետում՝ պատասխանն ուղարկելով Կազմակերպության directdemocracy451@gmail.com էլեկտրոնային հասցեին:

/Հ	Պաշտոնյայի Անուն ազգանուն	Պաշտոնը	Արձակուրդի մասին դիմումը գրանցելու ամսաթիվը	Արձակուրդի մեկնարկի և ավարտի ամսաթվերը	Արձակուրդի տեսակը՝ վճարվող, չվճարվող

Հարգանքով,
Կազմակերպության նախագահ՝
Գևորգ Քոթանջյան